Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 25-06-2025 թ. որոշմամբ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 29/62
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00358
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2004-07-20
1.5 ՀՎՀՀ-ն		02545193
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10243564
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.youhtfund.am/
1.8 Էլեկտրոնային փոստը		gyulloarabyan@mail.ru
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արթուր Պողոսյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	4	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	ձեռնարկատիրական գործունեություն	22,520,429
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		

9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Երիտասարդների կացության և հանգստի կազմակերպման ծրագիր	15,089,930	
Ուսանողական կրթական ծրագրերի աջակցություն	2,520,000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	29,245,067	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	17,609,930	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 30 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«Երիտասարդական Նախաձեռնություններ» հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ և

Անկախ աուդիտորական եզրակացություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հունիս 2025

Երևան

Բովանդակություն

	Էջ
Հոգաբարձուների խորհուրդ	3
Անկախ աուդիտորական եզրակացություն	4
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Հոգաբարձուների Խորհրդի Անդամներ

Խորհրդի նախագահ	Վահրամ Բարսեղյան
Անդամ	Անժելա Ադամյան
Անդամ	Հայկ Պողոսյան
Անդամ	Անի Հովհաննիսյան
Անդամ	Հայկ Մինասյան

«ԱՅ Է.Ֆ ՓԻ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Կոմիտաս 49/2, 12-րդ հարկ
E-mail: info@ifp.am
Հեռ. +(374) 99 26 77 77

"IFP" LLC
49/2 Komitas St., 12th floor., Yerevan, RA
E-mail: info@ifp.am
Tel. +(374) 99 26 77 77

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երիտասարդական նախաձեռնություններ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Երիտասարդական նախաձեռնություններ» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական վիճակը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն առ 2024թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:
-

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:
Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք ՀԷՄՍԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝ հատկորոշում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան

աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա՞ է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը.
- ձեռք ենք բերում բավականաչափ և համապատասխան ապացույցներ Հիմնադրամի ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջությամբ պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու աուդիտորն է՝

Աշոտ Բարսեղյան

Տնօրեն

«Այ էֆ Փի» ՍՊԸ

25 Հունիս, 2025թ.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ԱՅ ԷՖ ՓԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
«ԱՅ ԷՖ ՓԻ»
LIMITED LIABILITY COMPANY
"IFP"
YEREVAN

«Երիտասարդական նախաձեռնություններ» հիմնադրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.2024թ. հազ. դրամ	31.12.2023թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	3	79,899	78,975
Հետաձգված հարկային ակտիվ		151	151
		80,050	**79,126**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	4	409	409
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	5	710,538	711,184
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	87,965	368,945
		798,912	**1,080,538**
Ընդամենը ակտիվներ		**878,962**	**1,159,664**
ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կապիտալ և պահուստներ			
Կուտակված հավելուրդ		716,531	730,365
		716,531	**730,365**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ փոխառություններ	7.1	110,710	91,705
Ակտիվներին վերաբերող շնորհներ	7.2	49,820	63,975
		160,530	**155,680**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8	1,047	145,423
Շնորհներ			-
Շահութահարկի գծով պարտավորություն	12.2	854	128,196
		1,901	**273,619**
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		**878,962**	**1,159,664**

Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները (էջ 7 - 29) հաստատվել են ղեկավարության կողմից 25.06.2025թ. և թույլատրվել հրապարակման համար, ստորագրությամբ՝

Արթուր Պողոսյան
Տնօրեն

Գյուլլո Արաբյան
Գլխավոր հաշվապահ

«Երիտասարդական նախաձեռնություններ» հիմնադրամ

Շահույթի կամ վնասի եվ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասի հաշվետվություն 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծնթ.	2024թ. հազ. դրամ	2023թ հազ. դրամ
Հասույթ	9	13,000	17,424
Ինքնարժեք	10	(2,512)	(2,251)
Համախառն շահույթ		**10,488**	**15,173**
Վարչական ծախսեր	11	(33,392)	(36,207)
Շնորհներից եկամուտ	7.2	14,155	143,993
Կանոնադրական նպատակներին ուղղված ծախսեր (ուսանողների ուսման ծախսերի հատուցում)		(2,520)	(2,325)
Գործառնական շահույթ		**(11,269)**	**120,634**
Ֆինանսական եկամուտ		9,520	2,464
Ֆինանսական ծախս		(11,005)	
Ոչ գործառնական եկամուտ(վնաս)	13		658,820
Այլ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերությունից			755
Շահույթ/վնաս մինչև հարկումը		**(12,754)**	**782,673**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	12.1	(1,080)	(128,196)
Տարվա զուտ շահույթ/վնաս		**(13,834)**	**654,477**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		**(13,834)**	**654,477**

Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները (էջ 7 - 29) հաստատվել են ղեկավարության կողմից 25.06.2025թ. և թույլատրվել հրապարակման համար, ստորագրությամբ՝

Արթուր Դոդոյան
Տնօրեն

Գյուլլո Արաբյան
Գլխավոր հաշվապահ

«Երիտասարդական նախաձեռնություններ» հիմնադրամ

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Կուտակված հավելուրդ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	**75,888**	**75,888**
Հաշվետու տարվա շահույթ (վնաս)	654,477	654,477
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**730,365**	**730,365**
Հաշվետու տարվա շահույթ (վնաս)	(13,834)	(13,834)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**716,531**	**716,531**

«Երիտասարդական նախաձեռնություններ» հիմնադրամ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալական վճարներից	14,300	30,000
Հիմնական միջոցների օտարման ԱԱՀ		144,268
Վճարումներ գնումների դիմաց	(2,326)	(6,715)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(11,152)	(10,724)
Կանոնադրական նպատակների իրականացում	(2,520)	(2,325)
Վճարումներ բյուջե	(147,270)	(3,352)
Վճարված շահութահարկ	(128,422)	(175)
Գործառնական գործունեությունից այլ մուտքեր		58
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	**(277,390)**	**151,035**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տոկոսների ստացում	9,520	2,464
Հիմնական միջոցների ձեռքբերում	(21,110)	(169)
Հիմնական միջոցների օտարում		25,435
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	**(11,590)**	**27,730**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված փոխառություն	8,000	144,300
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	**8,000**	**144,300**
Դրամական միջոցների զուտ հոսք	**(280,980)**	**323,064**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություն		755
Տարեսկզբի դրությամբ դրամական միջոցներ	368,945	45,125
Տարեվերջի դրությամբ դրամական միջոցներ	**87,965**	**368,945**

«Երիտասարդական նախաձեռնություններ» հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Հիմնադրամի մասին

«Երիտասարդական նախաձեռնություններ» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) ստեղծվել է ՀՀ Արդարադատության Նախարարի 04.12.1998թ.-ի թիվ 1098 հրամանով գրանցված «Համահայկական Երիտասարդական Հիմնադրամ» հասարակական կազմակերպության (հասարակական կազմակերպության պետական գրանցման վկայական՝ թիվ 858) վերակազմավորման արդյունքում 2000թ.-ի հոկտեմբերի 23-ին: Հիմնադրամի կանոնադրությունը պետական ռեգիստրում գրանցվել է 2004թ. հուլիսի 20-ին, գրանցման համարը՝ 222.160.00358, վկայական՝03Ա002094: 2009 թվականի մարտի 13-ին կատարվել է Հիմնադրամի անվան փոփոխություն՝ վերանվանվելով «Երիտասարդական նախաձեռնություններ» հիմնադրամ:

Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 0001, Նալբանդյան 29/62, փաստացի գործունեության հասցեն ք. Երևան, Դ. Անհաղթի 10/20, հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 02545193:

Հիմնադրամն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրամի կանոնադրությամբ, ինչպես նաև Հիմնադրամի իրավասու մարմինների որոշումներով:

Հիմնադրամի լրիվ անվանումն է՝

հայերենով՝ ***«Երիտասարդական նախաձեռնություններ» հիմնադրամ***

անգլերենով՝***«Youth Initiatives» Foundation***

Հիմնադրամի խնդիրներն են՝

- Հայաստանի զորացմանն ու ամրապնդմանը, Հայաստանում ընթացող ժողովրդավարական գործընթացներին, իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացման աջակցություն
- Հայաստանի երիտասարդության առջև ծառացած բազմաբնույթ հիմնախնդիրների լուծման ուղղված գործունեություն
- երիտասարդական ձեռներեցության զարգացման ուղղված ծրագրերին աջակցություն
- Հայաստանում երիտասարդության կրթական, գիտական, մշակութային և սոցիալական առաջխաղացում

Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար:
2023թ. սեպտեմբերին Ադրբեջանի սանձազերծած պատերազմից հետո ավելի քան հարյուր հազար մարդ՝ այսինքն, Լեռնային Ղարաբաղի գրեթե ողջ բնակչությունը, մեկ շաբաթվա ընթացքում արտագաղթեց Հայաստան: Ըստ այդ, որպես տարածաշրջան, Լեռնային Ղարաբաղը Հայաստանի համար կորուստ հանդիսացավ, այդ թվում՝ ձևավորված տնտեսական կապերի առումով:
2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև բռնկված ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հայաստանի տնտեսական համակարգի վրա միանշանակ ազդում են Ռուսաստանի Դաշնության դեմ կիրառվող պատժամիջոցները:
Ֆինանսական շուկաները շարունակում են մնալ անկայուն և բնութագրվում են գների հաճախակի զգալի տատանումներով:
Վերոնշյալը կարող է էական ազդեցություն ունենալ Ընկերության հետագա գործունեության և ֆինանսական վիճակի վրա, որի ազդեցությունը դժվար է կանխատեսել: Ապագա տնտեսական և կարգավորող միջավայրը և դրա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել ղեկավարության ներկայիս ակնկալիքներից:

2. Պատրաստման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություններում: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ-ներ): ՖՀՄՍ-ները Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Ստանդարտները և Մեկնաբանություններն են, որոնք կազմված են.

- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից,
- Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներից,
- Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի (ՖՀՄՄԿ) մեկնաբանություններից, և
- Մեկնաբանությունների մշտական կոմիտեի (ՄՄԿ) մեկնաբանություններից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 2. 5-ում:

2.1. Անընդհատության հիմունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով:

2.2. Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (այսուհետ՝ Դրամ): Այն հանդիսանում է նաև Հիմնադրամի այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 Նոր և փոփոխված ՖՀՄՍ-ներ, որոնք ուժի մեջ են մտնում ընթացիկ տարվա համար

Նոր և փոփոխված ստանդարտներ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Ընկերությունն առաջին անգամ կիրառել է հետևյալ ստանդարտները և փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել 2024թ. հունվարի 1-ից.

- Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում «**Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում**»
  Պարտավորությունների դասակարգումը ընթացիկի և ոչ ընթացիկի
- Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում «**Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում**»
  Կովենանտներով ոչ ընթացիկ պարտավորություններ
- Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում. «**Վարձակալություն**»՝ վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալություն գործարքներում
- Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում «**Հաշվետվություն դրամական հոսքերի մասին**» և ՖՀՄՍ 17-ում «**Ֆինանսական գործիքներ**»՝ մատակարարների հետ ֆինանսական պայմանավորվածություններ:

Դրանցից ոչ մեկը ազդեցություն չի ունեցել Հիմնադրամի 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար պատրաստած Ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հրապակված, բայց դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ

Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ. ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ 2024 թվականի մայիսի 30-ին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՍԽ/IASB) հրապարակեց ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7-ի փոփոխությունները՝ **Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ** (այսուհետ՝ Փոփոխություններ): Փոփոխությունները ներառում են.

- Պարզաբանում այն մասին, որ ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է վերջնահաշվարկի ամսաթվին և առաջարկում են հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն (եթե բավարարվում են որոշակի պայմաններ)՝ էլեկտրոնային վճարային համակարգի միջոցով վերջնահաշվարկվող ֆինանսական պարտավորությունները ապաճանաչելու համար մինչև վերջնահաշվարկի ամսաթիվը
- Լրացուցիչ ուղեցույց այն մասին, թե ինչպես պետք է գնահատվեն բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման (ESG) և նմանատիպ առանձնահատկություններ ունեցող ֆինանսական ակտիվների պայմանագրային դրամական հոսքերը
- Պարզաբանումներ այն մասին, թե ինչն՞ է կազմում առանց հետադարձ կապի առանձնահատկությունը և որոնք են պայմանագրով կապված գործիքների բնութագրերը
- Բացահայտումների ներդրում՝ պայմանական առանձնահատկություններով ֆինանսական գործիքների և լրացուցիչ բացահայտման պահանջների ներդրում՝ այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով դասակարգված բաժնային գործիքների (OCI) համար

Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակահատվածների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է՝ միայն ֆինանսական ակտիվների դասակարգման և դրանց հետ կապված բացահայտումների համար նախատեսված փոփոխությունները վաղաժամկետ կիրառելու հնարավորությամբ: Կազմակերպությունը ներկայումս չի մտադրվում վաղաժամկետ կիրառել փոփոխությունները:

ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվություններում ներկայացում և բացահայտում» 2024 թվականի ապրիլին ՀՀՄՍԽ-ն հրապարակեց **ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվություններում ներկայացում և բացահայտում»** ստանդարտը, որը փոխարինում է **ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»** ստանդարտին: ՖՀՄՍ 18-ը ներկայացնում է շահույթի կամ վնասի հաշվետվության մեջ ներկայացման նոր պահանջներ, ներառյալ որոշակի ընդհանուր գումարներ և ենթագումարներ: Ավելին, կազմակերպությունները պարտավոր են դասակարգել շահույթի կամ վնասի հաշվետվության մեջ ներառված բոլոր եկամուտներն ու ծախսերը հինգ կատեգորիաներից մեկի՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկերի և ընդհատված գործառնությունների, որոնցից առաջին երեքը նոր են: Կան ներկայացման հատուկ պահանջներ և տարբերակներ այն կազմակերպությունների համար, որոնք ունեն որոշակի հիմնական բիզնես գործունեություն (օրինակ՝ հաճախորդներին ֆինանսավորում տրամադրելը, կամ որոշակի տեսակի ակտիվներում ներդրումներ կատարելը, կամ երկուսն

էլ): Այն նաև պահանջում է բացահայտում ղեկավարության կողմից սահմանված նոր կատարողականի ցուցանիշների, որոնք եկամուտների և ծախսերի ենթագումարներ են, և ներառում է ֆինանսական տեղեկատվության ընդհանրացման և մանրամասնելու նոր պահանջներ՝ հիմնվելով հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ծանոթագրությունների սահմանված դերերի վրա:

ՀՀՄՍ 7 «Դրամական հոսքերի հաշվետվություն» ստանդարտում կատարվել են նեղ շրջանակի փոփոխություններ, որոնք ներառում են անուղղակի մեթոդով գործառնություններից ստացված դրամական հոսքերի որոշման սկզբնական կետի փոփոխությունը՝ շահույթ կամ վնասից գործառնական շահույթ կամ վնաս և դիվիդենտներից և տոկոսներից ստացված դրամական հոսքերի դասակարգման վերաբերյալ լրացուցիչ հնարավորության վերացում: Բացի այդ, կան հետևանքային փոփոխություններ մի շարք այլ ստանդարտներում:

ՖՀՄՍ 18-ը և մյուս ստանդարտների փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն թույլատրվում է ավելի վաղ կիրառում և պետք է բացահայտվի: ՖՀՄՍ 18-ը կիրառվելու է հետադարձ ուժով: Ընկերությունը այժմ աշխատում է պարզելու փոփոխությունների բոլոր ազդեցությունները հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ծանոթագրությունների վրա:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

2.5 Հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Հիմնադրամը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրումների պատճառ հանդիսանալ:

Մաշվածություն և հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ - օգտակար ծառայության ժամկետները հիմնված են ղեկավարության գնահատականների վրա և կարող են հետագայում փոփոխվել (տես Ծանոթագրություն 2.9):

Ստացված անտոկոս փոխառությունների չափում - Հիմնադրամը ստացել է անտոկոս փոխառություն՝ հիմնական միջոցի գնորդ հանդիսացող իրավաբանական անձից: Նման փոխառությունները դիտվում են որպես երկարաժամկետ և չափվում են ապագա դրամական հոսքերի ներկա արժեքով, ինչը հավասար է ստացված փոխառությունների ներկա արժեքին: Ստացված փոխառությունները ճանաչվել են դրանց մարմանը ուղղվող դրամական հոսքերի ներկա արժեքով, իսկ այդ գումարի և ստացված դրամական միջոցների

տարբերությունը ճանաչվել է, որպես հիմնական միջոցի օտարումից օգուտ: Որպես զեղչման դրույք կիրառվել է տարեկան 12% տոկոսադրույք: (տես Ծանոթագրություն 7.1):

2.6 Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում:

Հիմնադրամի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի (իրական արժեքի աստիճանակարգ):

- Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)
- Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից
- Մակարդակ 3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

2.7 Արտարժութային գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ.

ա) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը,

բ) արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվա փոխարժեքով:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են արտարժույթով գործարքների մարման կամ հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, ճանաչվում են ֆինանսական արդյունքներում:

2.8 Ֆինանսական գործիքներ

Ընկերությունում առկա են հետևյալ ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները.

- դեբիտորական պարտքեր,
- կրեդիտորական պարտքեր,
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ:

Դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չեն նախորոշվել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները կազմված են դրամարկղի դրամական միջոցներից, բանկում պահվող դրամական միջոցներից, կարճաժամկետ ավանդներից և նրանց գծով հաշվեգրված տոկոսներից:

2.8.1 Ճանաչումը և սկզբնական չափումը

Ֆինանսական գործիքները ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործարքի պայմանագրային կողմ: Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքները չափվում են փոխհատուցման իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ անմիջականորեն կապված ծախսումները:

Կարճաժամկետ (մինչև վեց ամիս մարման ժամկետ ունեցող) դեբիտորական և կրեդիտորական պարտքերի իրական արժեքը հավասար է համապատասխան գործարքի գնին, այսինքն՝ դեբիտորական (կրեդիտորական) պարտքի դիմաց ստացման (վճարման) ենթակա դրամական միջոցների անվանական գումարին, եթե զեղչման ազդեցությունը էական չէ:

2.8.2 Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո դեբիտորական, կրեդիտորական պարտքերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները:

2.8.3 Ֆինանսական գործիքների ապաճանաչումը

Ֆինանսական ակտիվը (դեբիտորական պարտքերը) ապաճանաչվում է (դուրս է գրվում հաշվեկշռից) այն և միայն այն դեպքում, երբ.

ա) լրանում է ֆինանսական ակտիվի հետ կապված դրամական միջոցներ պահանջելու ժամկետը, կամ

բ) Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվի հետ կապված դրամական միջոցներ ստանալու պայմանագրային իրավունքը՝ առանց պահպանելու ակտիվի նկատմամբ վերահսկողությունը կամ ակտիվի հետ կապված բոլոր հիմնական ռիսկերը և օգուտները:

Ֆինանսական պարտավորությունը (կրեդիտորական պարտքերը, ստացված վարկերը և փոխառությունները) դուրս է գրվում հաշվեկշռից այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրով սահմանված պարտականությունը կատարվել է, չեղյալ է համարվել կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը (հայցային վաղեմության ժամկետը):

2.9 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Հիմնական միջոցի միավորի վրա կատարված հետագա ծախսումներն ավելացվում են հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտներն ավելի շատ կհոսեն դեպի Հիմնադրամ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից: Մյուս բոլոր դեպքերում ծախսումները ճանաչվում են որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախսեր:

Հիմնական միջոցների միավորի մաշեցվող (մաշվածության միջոցով որպես ծախսում ճանաչման ենթակա) գումարը պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հիմնական միջոցների համար ընտրվել են հետևյալ օգտակար ծառայության ժամկետները.

Շենքեր, շինություններ և կառուցվածքներ	20 տարի
Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	5 տարի
Այլ հիմնական միջոցներ	8 տարի

Հիմնական միջոցի մաշվածության հաշվարկը սկսվում է, երբ այն իր ներկա վիճակով պատրաստ է օգտագործման համար (անկախ փաստացի օգտագործվելու հանգամանքից) և այլևս չի դադարեցվում, մինչև տվյալ հիմնական միջոցի ապաճանաչումը կամ «որպես Վաճառքի համար պահվող» դասակարգումը՝ «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն» ՖՀՄՍ 5-ին համապատասխան:

2.10 Պաշարներ

Պաշարները ներկայացված են ինքնարժեքի և հնարավոր իրացման զուտ արժեքի նվազագույնով: Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է ԱՄԱԵ (առաջինը մուտք, առաջինը ելք) արժեքի բանաձևով: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռքբերման

ծախսումները և դրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Ծրագրերի իրականացման մեջ օգտագործելու նպատակով պահվող նյութերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, եթե ակնկալվում է, որ ծրագիրը, որի իրականացման նպատակով դրանք ձեռք են բերվել, դեռ շարունակվում է և պաշարները ենթակա են օգտագործման:

2.11 Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որը ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

2.12 Շնորհներ

Շնորհները ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, երբ կա հիմնավորված երաշխիք, որ.

ա) Հիմնադրամը կատարելու է շնորհներին հարակից պայմանները, և

բ) Շնորհները ստացվելու են:

Շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Հիմնադրամը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները.

- որոշակի ծախսերի համար տրված շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն ժամանակաշրջանում, որում ճանաչվում են այդ համապատասխան ծախսերը;
- մաշվող (ամորտիզացվող) ակտիվներին վերաբերող շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանների ընթացքում և այն համամասնություններով, որոնք համապատասխանում են այդ ակտիվների մաշվածության ծախսերի ճանաչմանը:

Ոչ պետական կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից ստացված շնորհների հաշվառման համար անալոգիայով կիրառվում է ՀՀՄՍ 20 Պետական

շնորհներ ստանդարտի մոտեցումները:

2.13 Հասույթ

2.13.1 Ծառայություններ

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, Ընկերությունը գործարքից հասույթը ճանաչում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվում են հետևյալ պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն:

2.14 Տոկոսներ

Տոկոսները եկամուտ են ճանաչվում կիրառելով արդյունավետ տոկոսի մեթոդը:

2.15 Շահութահարկ

2024 թ.-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը 18% է (2023թ.՝ 18%): Շահույթի կամ վնասի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկերն առաջանում են այնպիսի գործարքից կամ իրադարձությունից, որը նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում անմիջականորեն ճանաչվում է սեփական կապիտալում: Նման դեպքերում ընթացիկ և հետաձգված հարկերը ուղղակիորեն ճանաչվում են սեփական կապիտալում:

2.15.1 Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

2. 15. 2 Հետաձգված հարկեր

Ընկերության հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները և հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) և չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ:

Ժամանակավոր տարբերությունների հետ կապված հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝

հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների (հարկային բազայի) ժամանակավոր տարբերությունների վրա:

Հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով ճանաչվում է հետաձգված հարկային պարտավորություն՝ բացառությամբ նրանց, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից՝ այնպիսի գործարքի ներքո, որն այդ գործարքի պահին չի ազդում ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի (վնասի) վրա:

Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացումը, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որն այդ գործարքի պահին չի ազդում ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի (վնասի) վրա:

2. *Հիմնական միջոցներ*

	Շենքեր	Կառուց-վածքներ	Մեքենա/ սարքավորումներ	Տրանսպորտայի ն միջոցներ	Ար տն գո
Սկզբնական արժեք					
Առ 1 հունվարի 2023թ.	**284,924**	**28,503**	**636**	**49,054**	
Ավելացումներ	-	-	169	-	
Նվազեցումներ	(4053)		(410)	(49,054)	
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**280,871**	**28,503**	**395**		
Ավելացումներ				17,592	
Նվազեցումներ					
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	**280,871**	**28,503**	**395**	**17,592**	
Կուտակված մաշվածություն					
Առ 1 հունվարի 2023թ.	**205,114**	**20,778**	**636**	**49,054**	
Ավելացումներ	13,968	1,425		-	
Նվազեցումներ	(1,125)		(410)	(49,054)	
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**217,957**	**22,203**	**226**		
Ավելացումներ	13,782	1,425	46	1,142	
Նվազեցումներ					
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	**231,739**	**23,628**	**272**	**1,142**	
Հաշվեկշռային արժեք					
Առ 1 հունվարի 2023թ.	**79,810**	**7,725**		**-**	
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**62,914**	**6,300**	**169**	**-**	
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	**49,132**	**4,875**	**123**	**16,450**	

2024թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի լրիվ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմել է 43,624 հազ.դրամ (2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 43,546 հազ.դրամ):

2023թ.դեկտեմբերի 31-ի և 2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չի ունեցել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ այլ սահմանափակումների ենթակա հիմնական միջոցներ:

06.09.2024թ-ին Հիմնադրամի և «Սիլուետ Ինվեստ» ՍՊԸ-ի միջև կնքել է Հողամասի սերվիտուտի պայմանագիր: Այդ պայմանագրով Հիմնադրամը «Սիլուետ Ինվեստ» ՍՊԸ-ին է տրամադրում ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Դավիթ Անհաղթի փողոց թիվ 10/20 հասցեում գտնվող հողամասից՝ 176 քմ մակերեսով հողամասի սահմանափակ օգտագործման իրավունքը՝ վերջինիս սեփականության իրավունքով պատկանող՝ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն Կ. Ուլնեցու փողոց թիվ 43/5 հասցեում գտնվող ամշարժ գույքի հակահրդեհային անվտանգության կանոնների կիրառման հնարավորությունն ապահովելու նպատակով:

3. Պաշարներ

	31.12.2024թ. հազ. դրամ	31.12.2023թ. հազ. դրամ
Արտադրանք, ապրանք	3,527	3,527
Պաշարների արժեքի նվազում	(3,118)	(3,118)
	409	**409**

4. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31. 12. 2024թ հազ. դրամ	31. 12. 2023թ հազ. դրամ
Դեբիտորական պարտքեր հիմնական միջոցների վաճառքի գծով	709,806	709,806
Դեբիտորական պարտքեր վարձակալության գծով	2,600	1,300
Այլ նպատակներով տրված կանխավճարներ	29	38
Կանխավճարներ հարկերի գծով	2,243	40
	714,678	**711,184**
Անհուսալի դեբիտորական պարքտերի պահուստ	**(4,140)**	
	710,538	**711,184**

Հիմնական միջոցների վաճառքի գծով դեբիտորական պարտքերի աճը՝ Հիմնադրամին պատկանող՝ Կարապետ Ուլնեցի 43/5, Դավիթ Անհաղթ 4/21 և Դավիթ Անհաղթ 4/20 հասցեներում գտնվող անշարժ գույքերի վաճառքից է: Նշված տարածքների նկատմամբ ունի գրավի իրավունք որպես այդ դեբիտորական պարտքի մարման երաշխիք:

5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2024թ.	31.12.2023թ.
	հազ. դրամ	**հազ. դրամ**
Բանկային ավանդներ ՀՀ դրամ	81,086	196,289
Բանկային հաշիվներ ՀՀ դրամ	6,651	172,427
Դրամարկղ	228	229
	87,965	**368,945**

6. 1 Բանկային ավանդներ

Պայմանագիր	Ավանդի մնացորդ	Արժույթ	Տոկոս	Պայմանագրի ամսաթիվ	Մարման ամսաթիվ
A23-37768	40,000,000	ՀՀԴ	9,8%	20. 10. 2023թ.	23. 04. 2025թ.
A24-16805	40,000,000	ՀՀԴ	9,6%	30. 05. 2024թ.	02. 12. 2025թ.

Բանկային ավանդներն ընթացիկ են, ժամկետանց ու արժեզրկված չեն և ներդրված են ՀՀ վստահելի բանկերում՝ վարկանշված Fitch-ի վարկանշային գործակալության կողմից BB-:

6. 2 Բանկային հաշիվներ

Ստորև ներկայացված աղյուսակները դրամական միջոցների և դրանց համարժեք մնացորդների պարտքային որակն է՝ հիմնված պարտքային ռիսկի աստիճանների վրա, 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

«ԱՄԻՕԲԱՆԿ» ՓԲԸ	Արժույթ	31.12.2024թ.	31.12.2023թ.
		հազ. դրամ	**հազ. դրամ**
Fitch-ի վարկանիշ՝ BB-	ՀՀ դրամ	4,560	145,764
		4,560	**145,764**

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ	Արժույթ	31.12.2024թ.	31.12.2023թ.
		հազ. դրամ	**հազ. դրամ**
Moody's վարկանիշ՝B2	ՀՀ դրամ	2,091	26,663
		2,091	**26,663**

7. 1 Ստացված անտոկոս փոխառություն

	Արժույթ	Մարման ժամկետ	Դրույք (%)	31.12.24թ.	31.12.23թ.
				հազ. դրամ	հազ. դրամ
Ապահովված փոխառության հողատարածքների գնորդից	ՀՀ դրամ	31. 12. 2027թ.	Անտոկոս	144,300	144,300
Ստացված այլ փոխառություններ	ՀՀ դրամ	31. 12. 2025թ	Անտոկոս	8,000	
Զեղչման ազդեցություն				(41,590)	(52,595)
				110,710	91,705

Հիմնադրամը ստացել է անտոկոս փոխառություն իրեն պատկանող հողատարածքների գնորդից:

Ըստ Հիմնադրամի ղեկավարության մտադրության այդ փոխառությունները կվերադարձվեն ապագա ժամանակահատվածներում: Ստացված փոխառությունը ճանաչվել է դրա մարմանն ուղղվող դրամական հոսքերի ներկա արժեքով, իսկ այդ գումարի և ստացված դրամական միջոցների տարբերությունը ճանաչվել է օգուտ, որպես հիմնական միջոցների օտարման գործարքի մաս: Որպես զեղչման դրույք կիրառվել է տարեկան 12% տոկոսադրույք:

7. 2 Ակտիվներին վերաբերող շնորհներ

	31.12.2024թ	31.12.2023թ
	հազ. դրամ	հազ. դրամ
Մնացորդը տարեսկզբին	**63,975**	**207,968**
Շնորհներից եկամտի ճանաչում	(14,155)	(143,993)
Մնացորդը տարեվերջին	**49,820**	**63,975**

8. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2024թ.	31.12.2023թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Բյուջեի գծով	210	144,586
Արձակուրդային պահուստ	837	837
	1,047	**145,423**

9. Հասույթ

Հիմնադրամը 31.12.2024թ.-ի դրությամբ ունի կնքված գործառնական վարձակալության պայմանագիր, որը վերաբերում է Երևան քաղաքում տեղակայված հանրակացարանին և կից ճաշարանին: Վարձակալության պայմանագիրը վերակնքվել է 2018 թ. դեկտեմբերի 7-ին՝ մինչև 07.12.2029թ.: Պայմանագրով նախատեսված ամսական վարձավճարի չափը վարձակալությամբ տրված անշարժ գույքի համար մինչև 2019թ-ի օգոստոս ամիսը կազմում է 600 հազ. դրամ, իսկ 2019թ-ի սեպտեմբեր ամսից՝ 1,300 հազ. դրամ (ներառյալ հարկերը):

10. Ինքնարժեք

	2024թ.	2023թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Հիմնական միջոցների մաշվածություն	2,512	2,251
	2,512	**2,251**

11. Վարչական ծախսեր

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Հիմնական միջոցների մաշվածություն	14,156	15,159
Աշխատանքի հատուցում	11,254	8,329
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		2,388
Վարձակալություն	543	1,054
Չփոխհատուցվող հարկեր	734	3,116
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	550	755
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	407	359
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	482	3,178
Բանկային ծախսեր	33	53
Այլ ծախսեր	4,147	1,816
Ծախսեր տույժերից, տուգանքներից	1,086	
	33,392	**36,207**

12. 1 Շահութահարկի գծով ծախս

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս	1,080	128,196
	1,080	**128,196**

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն՝ շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18% (2023թ.-ին՝ 18%):

12.2 Շահութահարկի գծով պարտավորություն

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդը	**128,196**	**175**
Տարվա ծախս	1,080	128,196
Վճարում	(128,422)	(175)
Տարևերջի մնացորդը	**854**	**128,196**

13. Ոչ գործառնական եկամուտ(վնաս)

	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
ՀՄ օտարումից եկամուտներ	-	735,241
ՀՄ գնորդից ստացված անտոկոս փոխառության զեղչումից օգուտ	-	52,595
ՀՄ օտարումից ծախսեր	-	(129,016)
	-	**658,820**

14. Ֆինանսական գործիքներ-ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Հիմնադրամը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Արտարժույթային ռիսկ
- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Հիմնադրամի նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման

մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

14. 1 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն այն ռիսկն է, երբ գործընկերների կողմից Հիմնադրամի նկատմամբ իրենց պարտավորությունների չկատարելու արդյունքում, Հիմնադրամը կարող է կրել ֆինանսական կորուստներ: Պարտքային ռիսկն առաջանում է բանկային մնացորդներից և ծառայությունների մատուցման դեբիտորական պարտքից:

14. 2 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, երբ Հիմնադրամը դժվարություններ է ունենում այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են՝ դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով Հիմնադրամը պատրաստում է դրամական հոսքերի տարեկան նախահաշիվներ: Հիմնադրամի դրամական հոսքերի կանխատեսումների մեջ ներառվում են շնորհատուից ստացվելիք շնորհները և այլ հատկացումներ: Հիմնադրամը ունի ոչ էական ածանցյալ ֆինանսական պարտավորություններ:

14. 3 Արժութային ռիսկ

Արժութային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արժութային ռիսկին Հիմնադրամի հակվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված դրամական միջոցների հետ: Արժութային ռիսկը հիմնականում կապված է ԱՄՆ դոլարով արտահայտված դրամական մնացորդների հետ:

15. Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերությունում առկա են հետևյալ ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները.

- դեբիտորական պարտքեր,
- կրեդիտորական պարտքեր,
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ:

Դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չեն նախորոշվել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները կազմված են դրամարկղի դրամական միջոցներից, բանկում պահվող դրամական միջոցներից, կարճաժամկետ ավանդներից և նրանց գծով հաշվեգրված տոկոսներից:

16. Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների

Ֆինանսական ակտիվներ	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	710,538	711,184
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	87,965	368,945
	798,503	**1,080,129**

17. Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չեն նախորոշվել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները կազմված են դրամարկղի դրամական միջոցներից, բանկում պահվող դրամական միջոցներից, կարճաժամկետ ավանդներից և նրանց գծով հաշվեգրված տոկոսներից:

18. Պայմանական դեպքեր

Պայմանական պարտավորություններ

2024թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս հաշվետվության հաստատման ամսաթիվը Հիմնադրամի դեմ հարուցված դատական հայցեր չկան:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 28.06.2025 01:06